




ՀԱՐԱՐ
19 ՄԱՐՏ 1927

Հասցե՝ «AZTAG»
Journal Armenien
B. P. 587
Beyrouth Liban

Ա. Տարի

Կը հրատարակուի Զորեհարթի եւ Շաբաթ օրերը

Թիւ 5

Խմբագրական

ՀԱՅ ԵՎԵՂԵՑԻԻ ՇՈՒՐՋ

Արտասահմանի հայ մամուլը դրողեցնող հերթական խորհրդներէն մէկը, այս օրերուս հայոց եկեղեցին է, որ տալիս ապա- լի կազմութեան մը մասնաւոր է խորհրդային երկիրներու մէջ:

Կարգ մը բաղդախնդիրներ և կարգալուծ կղերականներ, ըմբոստացած էջմիածնի հեղինակութեամբ դէ «Ազատ Եկեղեցական» եղբայրակցութիւն» անունով հրապարակ էլած, մէկը միւսի ետեւէ կը գրաւեն եկեղեցիները, պատճառ դրոշմալուծ կոչուելու և պատկառման: Անոնք կը հիմնուին վերջերս կա- ռավարութեան հրատարակած օրէնքներուն վրայ, որ ուրիշ բան չէ եթէ ոչ օրինաւոր կողմուտի միջոց մը:

Գաղափար մը տալու համար թէ ինչ չափերու հասած է հակառակութիւնը, որ քաղերք սոսի բնկերակցութեան հա- յար խորհրդային կառավարութեան հրատարակած «Ազատ Եկեղե- ցի» թերթէն հատուած մը —

«Այսպէս թէ արդէս, էջմիածնի Գերաշոյն խորհուրդը ա- նելի մը մէջ փակուած կը գտնէ ինքզինքը թիֆլիզի մէջ: Քա- մայեան առաջնակարգ եկեղեցին, Վերայի Ս. Խայի, Ս. Սարգիս, Խաչնովանքը, Ս. Նշան, Ս. Գեորգ ամենէն հատուկաբար եկեղե- ցիներն են, որ փոխանցուած են Ազատ Եկեղեցական եղբայ- րակցութեան: Մարդիկ ձերբակալուած են, կառավարութիւնը միջամտած է»:

Թերթը չըսեք, թէ ինչ միջոցներով է որ կը դադարէն տիրա- նայ այս հաստատութիւններուն Տարբեր պայմաններու տակ արդեօք պիտի համարձակէի՞ն նոյնն քաղերք սոսի: Եթեմաստ- սունեցոյ յոս երեք կարգալուծները նախկին վարդապետ Բենիկ, նախկին քահանայ Սեփիան և նախկին եպիսկոպոս Կոստան հան- գուցեալ Ազատ, իրենց տարիներու կրօնական կեանքի ընթաց- քին օր միակ չէին մտածած քաղերք արգել հայոց եկեղեցին: Կարմիր աստղին կ'սպասէին թէ իրենց կեանքի վերջալուծին: Հետաքրքրական է Հայաստանի ժողովուրդին վերաբեր- մունքը՝ այս եղբայրակցութեան հանդէպ: Երբեք անոնք սարսափին: Կրկին դիմեց «Եղբայրակցութեան» օրկան «Ա- զատ Եկեղեցի»ին:—

«Ճիշտ այն միջոցին, երբ Բենիկ Ս. Վրդ. կը քարոզէր, լայն- կարծ ներք կը խուժէ Սահակ քահանայ իր մարդոց հետ: Եկող ներք մեծ անկարգութիւն կը լարու գտնեն, և կը սկսի զինի ու ետեւներու շարք: Կը լսուին նաև «կողի Բենիկ» բացական- չութիւններ: Բենիկը ստիպուած վերջ տուաւ քարոզին: Երեւ- ցաւ ոստիկանութիւնը...»

Ահա այս աստիճանին հասած է պաշարը հայոց եկեղե- ցիին դէմ, արդիս ատեն մը, երբ էջմիածնը զրկուած է իր բոլոր միջոցներէն և հնարաւորութիւն չունի պարտադրելու իր կամքը:

Եթէ իսկապէս, անկեղծ են այն «քարակարգիչներ» և կ'ու- ղեն ծառայել հայ եկեղեցիին, ինչո՞ւ օրինաւոր միջոցներով չեն ուզեր հասնիլ իրենց նպատակին: Հայոց եկեղեցին ժո- ղովորական կանոններ և օրէնքներ ունի, կը գումարուին եկեղեցական ժողովներ, որոնց ընթացքին խօսքի և զրչի պա- րարով կարող են իրենց տեսակէտները լայնօգնել իսկ եթէ ի- գոհացներ զիրենք աստիճանական սարկնորոգումներ, ինչ արգելք կը կապէ զիրեն հիմնելու իրենց ազատ հիմնարկու- թիւնները, փոխանակ լիազատակելու էջմիածնի վանքերն ու եկեղեցիները:

Պարզ է, որ ապառ եկեղեցական եղբայրակցութիւնը հիմ- նուած է ոչ թէ բարեկարգելու՝ այլ քանդելու համար: Ամէն հր- նութիւն կործանելու ծաղկաբանական մտայնութիւնը մարդիկ կ'ուզեն հասցնել մինչև հայոց դարաւոր եկեղեցիին:

Կը լայնօրին այս գործին մէջ: Անկասկած ո՞չ: Մէջտեղին է, վեց տարիներու իրենց պաշարին արդիւնքը: Քանի մը ամիսներ հազիւ են անցած, երբ միւսօր օրհնէքի ու թիւ էջմիածնի հաւաքուեցաւ ունելի քան ըստասուն հազար ժողովուրդ, Բաղվութիւն մը՝ որ էջմիածնի դեմ չէր տեսած: Եւ այս ի հեճուկա ամէն կայգի «եղբայրակցութիւններուն»:

Երբ այսպէս, Հայաստանի ժողովուրդն ու պարկեշտ մնա- ցած հոգեկրականութիւնը հակառակ տիրող բռնութեան՝ չեն քաշուել իրենց զգուշացող լայնելու: Սեփիաններուն ու Բենիկ- ներուն, ինչ կ'ընեն արտասահմանի մեր կղերականները:

Միւս մասին, անկեղծ ըլլալու համար բնքը թէ ներշնչուե- լով աւելի ազգային վեցացումէ, որքան ատեն որ հայոց եկեղե- ցին կը հանդիսանայ մեր գոյութեան զօրանքը, ազգակներէն մին՝ պարտ կ'ըզանք պաշտպանել զայն ամէն տեսակ բռնու- թիւններու դէմ: Ցարական Ռուսիոյ օրով Հայ Յեղափոխական Երիտասարդութիւնն էր կանգնած ան ուսուսի: Խորմեանի կողմին: Նոյնն է և այսօր: Բայց ինչպէս այն ատեն, ներկայիս ալ զինաւոր հոգը կ'իյնայ անոնց վրայ, որոնց լայնելու է եկեղե- ցիի պահպանման գործը, որոնք տալանք ունին իրենց լայնելու է և պարտաւոր են անաղարտ պահել: Շնորհայիններու և խորեմա- ցիներու փառքը:

Տակաւին չսեցինք ուժեղ մոլոր մը, արտասահմանի հայ եկեղեցւոյ պայտօնեաներէն: Եղած փարանոտ քաղերք չեն գոհացներ: Կորստի բալլերն են որ կը մղեն տեղի տալ ամեն կարգի չարագործներուն:

Ժամանակ է որ սխափի հայ հոգեկրականութիւնը: Տարի- ներ առաջ կրօնական տարբեր յարաբերութիւններու դէմ պաշարելու, աւելի յետոյ բաց ու գոցի խնդրին առթիւ: Գա- ռաւուն ու Պոլսի իրար անցնող կղերականներ ունին են ներկա- լիս: Կացութիւնը անհամեմատ աւելի ծանր է հիմա: Սեփիական տունն է որ կը քանդուի: Պիտի սթ սթին վերջապէս:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ՊԵՏՐՈՒԹԻ ՁՈՅԳ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒ ՌԻՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ

Իմ ճամբարդու թեան ընթացքին, մօտիկից ծանօթացայ Պարսկահայու- թեան ազգային կուլտուրական կեանքին, տեսայ և Միջագետքի հայութիւնը, երկուսն էլ կեանքն էլ գոյալ ոչ միայն արական ու կանայքի տաք օդը, տնտեսական սուր պա- քարի, գոյութիւնը մարդկանց մե- րկացել է: Սաւաճար երբ կուշա է լինում՝ ուղեղը չգործում՝ այդպէս գտայ Մեծ, Բրեւելքու:

Հայտնի իմ ճամբը դուրս մնաց, ոչինչ կարող եմ ասել այնպիսի հա- յութեան մասին: Ընթացքով կտրուի է անապա- տը, մեծ յոսեցող եմ մօտենում Մի- ջագետքի արաբի, Բէյրութին, լո- սիլ եմ, որ հոծ հայութիւն կայ այն- անգ, լսել եմ, որ կան և բազմաթիւ հայ մտաւորականներ, զոյգ համա- սարաններ ու շատ մը երկրորդական վարժարաններ, որ կը լաւանեն ու սովորեցնեն մեր երիտասարդներն ու պատանիները, այս բոլորը իմ ի- րաւունք էին՝ ապա մեծ յոսեցող մօտենալու Բէյրութին:

Ամապարիմ ասելու, որ իմ յո- սերը չիրականացան: Բէյրութի ազգ. հասարակական, կուլտուրական կեանքը դառաւ նոյն ժամ եղբայր՝ որքան հեռուսը Պարս- կաստանում, յետամնաց Բաղդա- տում: Հոս մարդիկ՝ ապրում են մի- միայն իրանց ստամոքսի համար: Կնիւնը ու աղջիկները մտածում են իրանց մարմինը, գաւապները, կարճ չըջողգետները մօտին, հետաքրք- րութեամբ են Պարսից գաղթ տն- նակներին նորաձեւութիւններով, մրցում են չնորայի ֆրանսուհիներէ հեռ և հեռուօրէն զղլում՝ որ հայ են ծնունդ:

Անպի, որ Բէյրութում շատ մը մտաւորականներ կան, եթէ համա- սարանական վկայալուս ունեցողնե- րին պէտք է մտաւորական կուլի- ալը պիտի մտաւորականները ճիշդ է որ շատ են հոս, որոնք իրանց իւրի մէջ են ապակում, որոնք դուրս չեն գալիս իրանց պատեանից և ապ- ըում են միայն մէկ բռնելի հա- րը, փոք չանել:

Թող չվերաւորուեն մեր մտա ո- բակները՝ եւ փաղաքացւան խոս- քեր ասելու մէջ վարժ չեն, ասում եմ միայն դառն իրականութիւնը: Փաստ է, Բէյրութի մէջ մտաւո- րականները միութիւն չկայ, չկան կիրականօրայ դասախօսութիւններ, գրական, գեղարուեստական երե- կայներ, ժողովուրդը լքուած է իր բազմից, վեհական և այլ կարգի հի անդուծութիւն, արեւելագիտութիւն ին խաղաղութիւնը բոյն են դնում մեր ժողովրդի մէջ և դեռ ասուեմք որ մտաւորականներ ունենք:

Իմ զգացած խոր ցուր ազդեցու- թեան տակ է որ գրում եմ այս տո- ւեղը: Գրում եմ ինչ չեմ նորաձեւու- թեան սիրահար տիկիներն ու օր- օրորներու համար որոնք, վստահ եմ, հայրենի թերթ կարգալու տրամադ- րութիւն իսկ չունեն, և ոչ ալ ին- թի համար ապրող և քրա ետեւից վազող մեր ինքնասէր, էկոնոմ մը- տաւորականներին համար: Իմ խոս- քերը ուղղուած են Բէյրութի ֆրան- ական և ամերիկեան զոյգ համա- սարաններ հայ ուսա- րդներին:

(Կը՝, ձեզ են ուղղուած իմ խոս- քեր յարգելի ուսանողներ յիշե- ցուած չեն ձեր հոգու խորքում հայրենիք սէրը, եթէ զգում էք որ պատկանում էք հայրենուած ու չարչարուած մի ժողովուրդի, որ վե- րականգնելու համար պէտք ունի ուժեղ անհասակութիւններ, եւ

թէ զգում էք ճանճնելի վտանգը, պէտք է վարկեալ մը դուրս գա- ռուսանող ձեր խցիկներից և ձեր թանկացին ժամանակի գտնէ մի փոքրիկ մասն արաբաբէք ձեր ցե- ղակիցներին որոնք մօտ են ճանճին, բարոյական անկման, աշխարհա- ժողովրդի բազկերակը չի խուժ- րովհետեւ մտաւորականութիւնը չի ցանկանում աշխատել, ճանճել նե- խում է, որովհետեւ զայն փոթորկող ուժ չկայ, շուրջ մի չկայ:

Իրանից մօտ 15 դարեր առաջ, էլի Միջերկրային ափերում, Հռոմ- մում, Աթէնքում, Ալեքսանդրիայում մի քանի տասնեակ հայ ուսանողներ ունէինք որոնք ապագայում դա- ձան մեր անդրանիկ Թարգմանիչնե- րը, որոնք չ'առաջնեցին իրանց անհա- տական հանգստի, բարօրութեան ու գիրքի մասին, որոնք նուիրեցին հայ ժողովրդին և մեր գրականու- թեան Ոսկեդարը կերտեցին:

Տասնընկերորդ դարու կիսուն, Պարսիցում ունէինք մի խումբ հայրե- նասէր ու խանդավառ ուսանողներ, Օսմաններին, Մէյ վիչներու սերուն- ղը, որ մտածում էր ամէն բանից առաջ հայրենիքի մասին և որ հիմը զրեց մեր Սղգային սահմանադրու- թեան:

Ինքնաւ, օրհնելի մօտ հէտ դա- րաւ, Մօսկուայի, Բէյրութի համալսարաններում ունէինք զոհա- բերող ուսանողներին անզուգական մի սերունդ՝ որի գլխաւոր մտածու- մըն էր հայ ժողովուրդը և որ գըլ- խաւոր ազգու՝ դարձաւ մեր ազա- տագրական շարժման: Էլ չեմ ինչում ասուեցնել այն բազմաթիւ ուսանող- ներին որոնք իրաւաւ թողին իրանց համալսարանական ուսումը և տա- մարեցին իրանց ամբողջ ժամանակն ու կեանքը այն դժբախտ ժողովրդ- դին՝ որին զուգակներն եղաւ նաև դուք:

Բայց ինչ կարիք կայ հեռու- ները գալու, հէնց այսօր, Պարսի- գում, Պարսկայում, Վեհնայում, Ի- տալիայում ունենք համալսարանա- կան ուսանողներ որոնք ապրում են իրականութեան խիստ անձուկ պայման- ներում, որոնցից մի քանիսը սնունդի պակասից արդէն վարակուել են թոքախտից և հակառակ այն ճնշող պայմաններին, նրանք մտածում են թէ ինչպէս կարող են օգտակար հան- դիսանալ հայ ժողովրդին. նրանք ունեն Ուսանողական Միութիւն, ունեն և թերթ, պարբերաբար կու- ենեան համագումարներ, կը մտածեն չաւառ ասանդներին մասին, ար- ձակաւորներին կայքերին հայաշա- կե լոններ և կուտան դասախօսու- թիւններ, մէկ խօսքով նրանք չարժ- ման մէջ են և գիտակից՝ իրանց բարձր կոչման:

Ինչ եւ, լարգելի ուսանողներ, որպէս խաթ ու երիտասարդ ուժեր, կեանքի մաշկեցուցիչ հոգեբերից մա- սումը զերծ, կարող էք և պէտք է որ նուիրուեք հասարակական գործու- ղութեան ինչպէս որ օգտակար հան- դիսանալ հայ ժողովրդին. նրանք ունեն Ուսանողական Միութիւն, ունեն և թերթ, պարբերաբար կու- ենեան համագումարներ, կը մտածեն չաւառ ասանդներին մասին, ար- ձակաւորներին կայքերին հայաշա- կե լոններ և կուտան դասախօսու- թիւններ, մէկ խօսքով նրանք չարժ- ման մէջ են և գիտակից՝ իրանց բարձր կոչման:

Ձեր համալսարաններից իւրա- քանչիւր կէս դարու կեանք ունի, 50 ասարների ընթացքին մօտ 2000 վկայուած մասնագէտներին դուրս եկած այդ հաստատութիւններից, վկայուած հայերի թիւը հաշուեցը նուազագոյնը 200, քանի՞սը արդե- օք այդ 200 ից ընթացիկ են զոհա- բերութեան ու ինքնաւորութեան:

ճանապարհից, այդ հարցին ես չեմ ուզում պատասխանել, եթէ կան այդպիսիներ, պատմութեան կը մը- նայ նրանց անունների յաւելածը, ման գործը: Ես հետաքրքրուում եմ միայն ներկայով, ցաւով տեսնում եմ Բէյրութի ազգային կեանքում տիրող մահացուցիչ անարժեքները և ձեր անապարհ վերաբերումը: Ձեր թիւը հասնում է մօտաւորապէս 50 ի, Բէյրութի նման մի փոքրիկ քաղաքում, իստեն համալսարանա- կան ուսանողներ կայող են հրաշք- ներ գործել եթէ միայն ցանկութիւն ունենան ի հարկէ ձեզանից չի պա- հանջուում Ղաղարաններին յարմարե- տալ կամ կոյտներին աչքերը բանալ. այդ կը լինէր պահանջել անկարելին, չի պահանջուում նաև զբաղուել քա- ղաք տկանութեամբ կամ յեղափոխա- կան գործունէութեամբ, ո՞չ, ձեզա- նից պահանջում է շատ համեստ բան. — Հետաքրքրուել Սերիայում ապող ձեր ցեղակիցների վիճակով, պաշտպանել հայ գաղթականութեան տարրական իրաւունքները — եղական ֆրանսերէն ու արաբերէն թերթե- րում, ժողովրդի սրտում վառ պա- հել հայրենիքի գաղափարը, հետա- քրքրուել նոր սերնդի դաստիարա- կութեամբ, կազմակերպել հրապա- րակային դասախօսութիւններ Բէյ- րութում, իսկ արձակուրդներին Հա- լէքում, Դամասկոսում և բոլոր այն վարիերում (Սերիոյ չըլանում) ուր քիչ կամ շատ թիւով հայութիւն է ապրում, իսկ այս բոլորին կարելի է հասնել միայն ձեռնարկով:

Ստեղծեցէք ունեն զոյգ համա- սարանների Հայ Ուսանողական Մի- ութիւն, զծեցէք գործունէութեան մի ուղեգիծ, ունեցէք ձեր համա- սարանները և հաւատով ու եռան- քով աշխատեցէք այն դժբախտ ժո- ղովրդի համար՝ որի զուգակներն էք դուք:

14 Մարտ 1927 ԱՆՃՈՐԻ
Բէյրութ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Ճարտարագէտ Պ. Միքայելյան, որ Սրեան կը գտնուի այս պահուս, կըթ. գործավարութեան հետ հա- մաձայնած է Դպրոցատէր Տիկնաց վարժարանը նրանի մէջ կառու- ցանելու համար: Դպրոցի շէնքին հա- մար յառակացուած է Լէնինի փողո- ցին վրայ, յարմար տեղ մը:

Շէնքի կառուցումը պիտի սկսի յառաջիկայ գոյնին: Դպրոցի շէնու- թեան և պահպանման համար ար- դէն պայմանագրութիւն կնքուած է Դպրոց. Տիկ. Ֆրանսայի ներկայա- ցուցիչին հետ:

Այս առթիւ Դպրոց. Տիկ. ընկե- րութիւնը 5000 առարկ յանձնած է Բարեգործական նախագահ Պ. Պ. Նուպարի:

ՀԱՅԿ- ԵՐԺԱՆԿԱՐԸ

Խ. Թերթերը կը հաղորդեն թէ Ամերիկայի Լոս Անճելոս քաղաքը որ շարժական կարի մեծագոյն կըդրուեն, 1926 ին Ռուսիոյ արտադրած 48 շարժականներէն միայն երկուքը ուզած է Շիրվանցաօէի ճեմաւանը և Կորկիի Մարալը:

Գերմանական շարժական կարի- կրութիւնները առաջարկած են Հա- յաստանի շարժական կարի ընկերութեան միասին աշխատել և նոր նկարներ պատրաստել: Նշանաւոր ֆիլմի կազ- մակերպչը առաջարկած է բեմա- դրել մասունքի Դաւիթը: Համա- ձայնութիւն գոյացած է և այժմ բա- ակցութիւններ կը կառարուեն:

ԱՐԶԵՍԱՎԱՆ ԱՆՁՐԵՒ

Հայաստանի ջրային անտեսու- թիւնը ձեռք բերած է երկու ապա- րատ արհեստական սննդի առաջա- ցընելու համար:

ԴԻՄՈՒԿԱՌԵՐ ԵՒ ԱՆԴԻՄՈՒԿ

ՄԵԾ ՄԻՋԻՆԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

23 Մարտ 1927 Կրեկոյան ժամը 9.5 Ժն

-ԺՈՂՈՎ ԴՊՅԻՆ ՏՈՒՆ-Ի ՄՐԱՀԻՆ ՍԷՋ

ՕՐԳԵՍՏՐԸ, ՃԱԶ-ՊԱՆՏ, ԳՕԹԻՅՈՒՆ

Ծանօթ. Ամենաբնական դիմապատկերը պիտի ստանայ մրցանակ

ԼՈՒՍԱՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Հաշաւային Ամերիկա մեկնող երեսաւորագրութեան անհրաժեշտ է ունի Ի արձեւս:

Լուսանկարչութեան գործը ամենէն աւելի յաջողն է այդ երկրին մէջ: Մեկնելէ առաջ, կարճ ժամանակուան ընթացքին կարելի է ստիպի արձեւսը: Ստիպեցելը մասնաւոր պայմանագրութեամբ կը երաշխաւորուի:

Շատեր զգտած են այս առիթին եւ Կրնանք ապացոյցանել: Պայմանները դիւրամասշտկելի են: Փրաքիի լայն պատեմութիւն զոյգ աթէլիներու մէջ: Այս գործին պայմաններուն, ինչպէս նաեւ լուսանկարուելու համար՝ դիմեցէի Լուսանկարչի ԱՐԱՄ ՍԱՀԱԿՅԱՆԻ Պարն, Նաեւ համբաւն սկիզբը:

ՃԱՄԲՈՐԴՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Քրանս, Հաշաւային Ամերիկա, եւ այլու մեկնող համբաւոր-ներու, ինչպէս նաեւ Եւրասիական մեկնող ուղեւորներու ուղեւոր-ութեան կը յանձնեմք, թէ ի վիճակի ենք ամեն տեսակի դիւր-թիւներ ընծայել անցագրերու պատրաստութեան, ինչպէս նաեւ վիզէի մատնի, միտ մեզ կեդրոն ունենալով Օթէլ Մարսիլիան:

Այս բոլորի հետ ամենադիւրամասշտկելի գինով եւ լաւագոյն պայմաններով տուակներ կը հայթայթենք աշխարհի բոլոր նաւ-հանգիստներու, ի մասնաւորի Հաշաւային Ամերիկայի համար, ուր մեկնելի փափաքող համբաւորները այժմէն իսկ կ'արձանագրենք ի-րենց լաւագոյն պայմանները ապահովելու հաստատութեան եւ զանազան յանձնարարութիւններուն դիւրութիւն տալ:

Օթէլին կից հաստատած ենք նաեւ առանձին յանձնակազմ-ներու մը, որոնք միակ նպատակն է միջոցներէ եւ հաստատ-հասցէէ զուրկ ձեռաւոր ազգայիններուն հաղորդակցութեան եւ զանազան յանձնարարութիւններուն դիւրութիւն տալ:

Մանրամասնութեանց համար դիմել հետեւեալ հասցէին՝

ՇԱՒԱՐՇ ԻՍԷՆՍՆ

Օթէլ Մարսիլիա Պէրուք, Բօր

Հիւանդ Օթէլ Պաղտատ

ՊԵՐՈՒԹ ՆԱԿԱՆԳՍԻ ԿՍՅԱՐԱՆԻ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԿԻՑ

Ելեքորականութեամբ լուսաւորուած եւ որ կարասներով ծո-վահարեաց լեռներէն, մատչելի գիններ, լաւ սպասարկու-թիւն, տաք եւ պղծ ջուրի բաշխիչ եւ ընտանեկան մասնաւոր բաժիններ, Նաեւ դիւրութիւններ կ'ընծայէ ճամբորդներու, կը հայթայթէ նաւային տուակներ եւ կ'առաջնորդէ մինչեւ նաւ:

Տէր Եւ Տնօրէն

ՍՏԵՓԱՆ ՏԵՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ



ՄԷԶՈՆ ՊԼԱՆՇ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՆՈՒԳՈՐԾԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

(10 ԱՎԸՆԻՒՄ ՎԷՅԿԱՆ, ՊԱՊ-ԻՏՐԻՍ, ՊԵՐՈՒԹ)

Կ'ստանանք պատրաստութիւնը ամէն տեսակ հայկական ձեռագործներու, սեւ, ա-նի ծածկոցներ, անձեռոցներ, մահճաւորի ծածկոցներ, վարագործներ, կանանց յատուկ ժամէն տեսակ անեղնագործուած շրջագրութիւններ եւ ձեռակերպչներ, կանանց եւ առանց անեղնա-գործուած թաշկինակներ եւ այլն եւ այլն:

Ապագային կ'ընդունինք Սիւրիոյ եւ արտասահմանի բոլոր քաղաքներէն:

ՏՕՔԹ. Բ. ԳՈՒԼԱԳԵԱՆ

ՄՍՍՆՈՒԳԵՏ

Ներքին եւ վերտնական հիւանդութեանց

Խղճամիտ, արագ եւ արմատական դարմանում

Հիւանդ Կ'ԷՆԴՈՒՆԻՒՄ ԵՄԷՆ ՕՐ, ԺԱՄԸ 8-12 Ե 2-6

Կիրակի եւ թոշակաւ օրեր մասնաւոր ժամագրութեամբ

Պարմանում

ԺՕՐԻ ՀԱՅԵՏ ՓՈՂՈՑ

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ

- Ա. ՊԵՂԻ -

Կը պատրաստէ մեծ խմամով նորաձեւ լուսնոյ գեղարուեստական հարագատ լուսանկարներ մեծագործներէն եւ քաղաքացիներ

Արուեստը իւրացուցած է Փարիզի մեծագոյն արուեստատան մէջ

ԴԻՄՈՒՄՏՁԵԼԻ ԳԻՆԵՐ

Դիմել ծովագիւղ Զէյթունի փողոց

(9 avenue des Français)

Կօշկանորդ

ՍԱՐԳԻՍ ԿԻՒԼԷՍԵՐԵԱՆ

Կը նորոգենք ամէն տեսակի

կոշիկներ, Եւ իրենց նախ-

կին վիճակին կը վե-

րադարձնենք:

Կաղապարի վրայ վնասուած

կոշիկները, կը նորոգուին

անյուր կերպով:

Կուրօ Փողոց, Թիւ 74

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԵՐ

ԲԱՌԱՆՈՒԹԵՐՈՒՆ

Մեր թերթի Պաղեստինի վե-

րաբեր՝ այլ բոլոր գործերուն

համար պէտք է դիմել մեր գո-

ծակալ Պ. Կարախա Ղազէրեա-

նին:

Ազգականի վարչաւորին

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

«Մերկազմունք իրարման հե-

քին ծախքերն» եւ «Մուսթաֆա Բե-

մալ փաշայի ամուսնութիւնը»,

40 էջ գին 10 Բ. դահեկան:

Դիմել «Ազգականի վարչութեան»

ԹԵՐԹՈՆ «ՈՂՈՒՆ»

Թիւ 5

ԿԱՐՄԻՐ ՏՈՒՆԸ

Բ. ՄԱՍ

Գերման դեսպանի եւ Ենվերի տեսակցութիւնը

Եւրոպական նախարար ձաւիթ, պետական գանձին ունեցած անտե-սական տաքնապը առարկելով, օր առաջ գերմաններու հետ համաձայ-նութիւն կնքելու անհրաժեշտութեանը կը շեշտեն որ անակցութիւնները ձաւիթի այս տեսակցութիւնները գործող նախարար թաւաթի եւ պա-տերազմական նախարար Ենվերի հա-մաձայն էին: Իսկ ծովային նախա-րար ձեւով դեռ իբրեւ զորութիւն յայտ-նած չէր եւ կ'սպասէր դէպքերու արդիւնքին: Վարչապետ Սաթա Հա-լիմ փաշան զինուած չէր գործութիւն մը պահելու իր տեսակցութիւն մէջ յա-մառօրէն կը պնդէր: Եւ այս տարա-կարծութիւններու պատճառաւ խոր-հրդակցութիւնները կնքվարէին եւ չէին կրնար լուծուի գտնել:

Այս ձգտումը մեծ մասամբ լու-թեան կը մատչէր գերման դեսպանը, որովհետեւ կէսպէն եւ Պրիւսիա պա-տերազմական նախարար Թիւրքոյ յանձնարար առթիւ, կայսրէն ան-միջական հրաման ստացած էր թիւր-քիան իրենց հաշտոյն պատերազմի մասնակցելու առաջ: Դեսպանը թէպէտ յաջողած էր սիրաշահել Ենվերի ու թաւաթը, բայց չէր կրցած համազօր վարչապետ Սաթա Հալիմ փաշան եւ ձեւովը: Գերման դէպքանք տեսնելով զրոյստութիւններու կը հանդիպել:

առանձին տեսակցութիւն մը ունե-ցաւ Ենվերի հետ:

Գերման դեսպան — Բարձրագո-տի, Պալքանեան պատերազմին պարտուած դուրս եկած, Ձեր պա-տերազմական բոլոր սիջոցները ըս պաշտօնի, առանց դրամի եւ ուժի մնացի, եւ մենք այս բոլորը գիտ-նալով հանդերձ կուղինք Ձեզ մեզի զինակից ընել: Սեւ ծովու մէջ գրա-նուող ուսանական պատերազմական նախարար վարչական պաշտօնի ընալը կը իրող մեր երկու մեծ եւ վերջին սիսթեմով շնորհած նախարար անգլի-ական եւ ֆրանսական ամենատեղի նախարար մէջէն փախցնելով Ձեր հը-րամանին յանձնեցիք: Կէտք եղա-ծին չափ դրամ տալ եւ ի հարկին նոյն իսկ գերման զինուոր ալ փոխադրել խոստանալէ վերջ, կը զարմանա-մ Ձեզ դեռ ամառանման եւ անօրոյն-թեան մէջ տեսնելու համար: Ձեզ կրնար հասկնալ թէ դեռ ինչ կուզէ-մ Միւրեւ Ձեր ոտքը եկող այս շնորհնե-րուն ինչո՞ւ չէք ընդունալ: Լսած էի թէ Պոլսի վարչապէս կը վախնա-ր այդ վախն ալ այժմ փարատած է: Ձեզ կ'վստահանեմ որ մօտ օրէն Պոլսի վարչապէս կ'ընտրուի հետ մեր համաձայնու-թիւնը կնքուած կըլլայ: Եւ իմ տե-րութիւնս մի միայն ձեզի համար կը կնքէ Պալքանեան համաձայնութիւնը:

Կուզեց որ Պրիւսիի եւ Պոլսի գիծը առանց վտանգի, ազատ ըլլայ: Կու-զեց որ ներդրուելը ամբողջ, Ռու-սիան զրկուի արտաքին օգնութիւնէն եւ Ձեզի հետ միասին զայն ճշմարիտ կովկասը Ձեզի տանք եւ Թուրքի-ն համբաւն բանալը Թիւրքական միու-թեան արդիւնք ըլլալիք ազգերն ու խոչընդոտները կրնաք ընալը: Նոյն իսկ պիտի կրնաք գրաւել Պարսկա-ստանը: Երկարօրէն կը մտածեմ եւ չեմ կրնար ունէ պատճառ գտնել Ձեր այս տառաման համար: Կը կ'սկսածիմ որ անգլիոյ խաբուած ըլլաք: Վարչա-պետ Սաթա Հալիմ փաշան, դուք, Երկարօրէն ըլլալուն պատճառաւ աչ-քը անգլիացիներէն վախած ըլլալ եւ իր Երկարօրէն գտնուող կալուածները զինք մտածել տան: Բնական է որ ա-նոր Երկարօրէն հետ ունեցած կապա-ցութիւնը աւելի զօրաւոր է, քան Ձեզի հետ ունեցած կապակցութիւնը, զինուորական մէջ համաձայնութիւն չու-նի եւ կարողութիւնն ալ չափ սահմա-նափակ է: որով անոր կարծիքը չի պէտք է նշանակութիւն ունենայ: Դուք որ այնքան հուշակ հանած զին-ուորական մըն էք, տաղանդ մըն էք, այնքան տարիներ Երկարօրէն մնա-ցած, հոն ուսում առած էք եւ չափ սահման կը ճանչնաք գերմաններու զին-ուորական ուժը, կրնաք բաղդատու-թիւն դնել մեր եւ ուրիշ տերութիւն-ներու ուժին եւ կարողութեան միջեւ, որով Ձեզի կ'իշխայ Ձեր ընկերները լուսաբանելու պարտականութիւնը:

Երէկ իմ տերութիւնէս առած մէկ հրամանագրով, ինչ կը ինչեցնէր Ձեզ հետ կնքութիւնը համաձայնութեան անապատումը եւ մէկ շաբաթ միջոց

Եւ այս Գալատիէն ձեզի հաղոր-դեմ նաեւ որ եթէ շաբաթ մ'ալ ու-շանայ, կարծեմ պէտք չի մնար այդ համաձայնութեան (տեղի ելլելով) Վսեմաշուք կայսրէն մի միայն Ձեզ-րաբե հաղորդելու արտօնութիւն ըս-տացած եմ:

Ենվեր.— Փառաշուք կայսեր ինչ հանդէպ ունեցած համար սիսթի-սան յայտնելէ վերջ իմ խորին եւ-րախագիտութիւնս, նորին վսեմու-թեան բացատրութիւններուն գե-նդէն մինչեւ երկինք իրաւունք կու-տան: Մեզ հանդէպ Ձեր ցոյց տուած բարեգործութիւնէն չափազանց շնոր-հակալ եմ, վստահ եղէք աչք, որ գերմաններու հետ մէկ ճակատի վրայ պատերազմի մասնակցել ինչի հա-մար մեծ պատիւ մըն է: ամէն պա-րագրայի տակ ընկերներս համազօր-եւ նորէն վսեմապատիւ կայսեր ինչ հանդէպ ունեցած վստահութիւնն ու համակրանքի ալ արժեքներու բոլոր կարողութեամբս պիտի աշխատիմ: Միայն թէ դրամի խնդիրն ալ կար-գադրենք, այս օրեւ մեր տնտեսա-կան վիճակը չափ գէշ դրութեան մատուած է: Արդեաւ երբեք որքան դրամ պիտի կրնաք տալ մեզ, այս մասին հանցէք զին լուսաբանել որ աւելի դիւրաւ համոզել կարողանամ ընկերներս:

Դեսպան.— (Երբ մը մտածելէ վերջ) Ձեր ուզած պահուն 10 միլի-ոն ոսկի տալու կայաւառիմ:

Ենվեր.— Այդ շատ քիչ է եւ վրձ-ուականութիւն չիկայ: Ձեր խօսքին մէջ գրեմք եւ զինուոր մարդ եմ, կուզեմ որ եղած խոստումները վրձ-ուական ըլլան, որ կարող ըլլամ մեր ժողովին մէջ պաշտպանել:

Դեսպան.— (Ինչպիսիք) Կը տես-նեմ որ զինուորական չափ ալ դի-ւանագիտութեան մէջ կարող էք արուեստը այդ գոյն մարդ առաջին ա-վանցն է: քիչ չէ: պէտքն համե-մատ հետեւեալէն կը տրուի: իմ ան-պաշտօն ստացած լուսնոյն համա-ձայն տերութիւնս մտադիր է քանի մը հարկեր միլիոն ոսկի երեքի բա-նալ ձեզի համար:

Ենվեր.— Կ'իշխայ այդ 10 միլիո-նի ավանսը վաղը տալ մեզի:

Դեսպան.— Կը տեսնեմ որ դուք խնդրեք այսօր վերջացնելու միտք ունէք, այո, նորին վսեմութեան կող-մէ անձամբ, նոյն իսկ հաւաճայնով ըլլայ, երբ պահանջ ներկայացուի, բոլոր պատասխանատուութիւնը վը-րաս առնելով, կը արամադրեմ այդ գումարը:

Ենվեր.— Ներողութիւն, չի կըր-ցայ լաւ հասկնալ:

Դեսպան.— Վսեմաշուք կայսեր Ձեր վրայ ունեցած վստահութիւնն ու համակրանքը նաեւ առնելով, առանց սպասելու համաձայնագրի ստորագրումը, մի միայն Ձեր խօս-քին ու խոստումին վստահելով, ձեր կառավարութեան կը յանձնեմ այդ գումարը:

Ենվեր.— Վստահ եղէք որ ինչ հանդէպ ցոյց տրուած այս վստահու-թիւնն ու համակրանքը պիտի իրա-կանացնեմ:

Այս խոստումը ստանալէն վերջէնվեր պէտք եղած ձեւակերպութիւններն ու հրաժեշտը կատարեց եւ մեկնե-ցաւ:

X.

Արտօնատէր

ՏՕՔԹ. Ա. ԳՈՒՆԱԿԵԱՆ